դնելու մի միջոց, վերջինս զիջման բերելու ճանապարհ, այն կարգադրութիւնը, որով անասելի դժուարութիւններ եւ խոչընդոտներ էին յարուցւում Հայաստանի առաջ՝ Բաթումի վերայով դրսի աշխարհից ալիւր եւ այլ կենսամթերք ստանալու: Կարելի է ասել՝ Հայաստանը փաստական բլոկադի՛ էր ենթարկուած այդ օրերին, վրաց կառավարութեան որոշակի քաղաքականութեան պատճառով: Մարդիկ ուզում էին այդ ձեւով ստիպել Հայաստանի կառավարութիւնը, ճանաչելո՛ւ Վրաստանի «իրաւունքը» Ջաւախքի եւ Լօռիի վրայ, եթէ չասենք՝ աւելին: Եւ եթէ չլինէր ուրիշների միջամտութիւնը եւ ներկայացրուած պահանջները՝ ճանապա՛րհ տալու Հայաստան ուղարկուող եւ ալիւրով բեռնաւորուած կառաջարքերին, գուցէ թէ երկար տեւէր մենշեւիկների կազմակերպած բլոկադը Հայաստանի դէմ: Եթէ, աւելի՛ եւս երկար տեւէր տաճկական բռնագրաւումը Ախալքալաքում (ինչպէս եւ հայկական ու անդրկովկասեան ուրիշ հողամասերում), այդ պարագային պատկերը չա՛տ աւելի մռայլ պիտի լինէր:

Իրականութիւն է յամենայն դէպս, որ այդ բռնագրաւման, ինչպէս նաեւ վրացական կառավարութեան տմարդի քաղաքականութեան պատճառով Ախալքալաքի հայութիւնը շուրջ 15 հազար զոհեր տուաւ եւ կոտորակուած վերադարձաւ իր գաւառը, երբ վերջինս արդէն պարպուած էր տաճիկ գրաւող բանակների կողմից:

Հազիւ էին սակայն ախալքալաքցիները կրկին ոտք դրել իրենց պապենական օջախները, որ վրացական զօրքերը (անշուշտ որպէս հետեւանք գաւառը պարպող տաճիկների կայցրած համաձայնութեան) գրաւեցին Ախալքալաքի գաւառը (1918 Դեկտեմբերի սկիզբը): Այդ եւս պատճառներից մէկն էր, որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ զինուած ընդհարում տեղի ունեցաւ (այսպէս կոչուած հայ-վրացական պատերազմ, 1918 թ. Դեկտ.):

Ցաւոնի է արդէն, որ «մեր մեծ դաշնակիցների» կովկասեան ներկայացուցիչները որոշեցին ճանաչել կատարուած փաստը — արդէն ե՞րբ այդպէս չէ լինում — այսինքն՝ Ախալքալաքը համարել վրացական հող, «մինչեւ որ Փարիզի հաշտարար ժողովը» վերջնական որոշում կուտար: Պայմաններից մէկն էլ այն էր, որ Ախալքալաքի գաւառի վրացական վարչութեան վրայ պիտի հսկէր դաշնակիցների մի յանձնախումբ, մասնակցութեամբ նոյն այդ գաւառի ազգաբնակութեան ներկայացուցիչների: Եւ յետոյ, համաձայն որոշման՝ միայն սահմանափակ թուով վրացական զօրքեր կարող էին մնալ Ախալքալաքի գաւառում:

Ի հարկէ, ո՛չ մէկ կէտը կատարուեցաւ, ո՛չ էլ միւսը: Հայաստանը, կլանուած բաղմաթիւ ներքին եւ արտաքին հոգերով, բողոքելով Ախալքալաքում ստեղծուած գոյավիճակի դէմ ու չճանաչելով հանդերձ այն՝ հնարաւորութիւն չունեցաւ աւելին անելու:

Իսկ յետոյ, երբ Հայաստանը եւ անդրկովկասեան միւս երկիրները խորհրդայնացան, երբ բոլշեւիկ դարձած ռուսները վերադրաւեցին Անդրկովկասը, նրանք զրեթէ անփոփոխ ձեւով ճանաչեցին իրենցից առաջ եղած Status quo-ն Անդրկովկասում, որով եւ՝ Ախալքալաքի գաւառը որպէս «անբաժան մաս» Վրաստանի խորհրդային հանրապետութեան: Դրանով, ի հարկէ, Ախալքալաքի հարցը չլուծուեցաւ արմատապէս, ոչ էլ Ջաւախքի հայութիւնը հաշտուեցաւ այս անգամ արդէն համայնավա՛ր պիտակի տակ կատարուած բռնադատ որոշման մտքի հետ: Այդպիսով՝ Ախալքալաքի հարցը մնաւ մի նոր փուլի մէջ:

Բայց նախ՝ մի քանի խօսք այդ գաւառի մասին՝ տերրիտորեալ (հողային), ցեղագրական, վիճակագրական եւ տնտեսական տեսակէտից:

LXIV

Ախալքալաքը կամ Ջաւախքը պատմական Հայաստանի Գուգարք նահանգի գաւառներից մէկն է, հիւսիսային ծայրամասը: Նա իր մէջ է առնում Հայկական Բարձրաւանդակի այդ լճաշատ շրջանը, Կուր գետի վերնահովտում: Լճերից նշանաւոր են՝ Փարվանայ (կամ Թոփարավան), որի մասին եղած հայ-ժողովրդական մի սիրուն աւանդութիւնը նիւթ է ծառայել Ցովհաննէս Թումանեանի այնչափ գողտրիկ հոմանուն (Փարվանա) բանաստեղծութեան, ապա՝ Թանչալուայ, Մատաթափայի եւ ուրիշ լճակներ: Գաւառի լճաշատ շրջանը